



Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ

ՀԵՆՐԻԿ ՍԱՐԿԱՎԱԳ



Եծի Տանն Կիլիկիո ուրաց-
յալ Գարեգին Ա. Կաթողիկոսի
մահվան գույժը.— Սուրբ Էջ-
միածնի Մայր Տաճարում սուրբ
պատարագ էր մատուցվում, երբ Վեհափառ
Հայրապետի անունով արտասահմանից
ստացված հեռագիրը գուժեց Մեծի Տանն Կի-
լիկիո Կաթողիկոս Գարեգին Ա.ի մահը: Պա-
տարագը մի քանի րոպե ընդհատվեց և գե-
րաշնորհ տեր Սահակ սրբազանը, հուզված,
հայտնեց ժողովրդին ցավալի լուրը: Պատա-
րագից հետո անմոռանալի հանգուցյալի հի-
շատակին կատարվեց հոգեհանգիստ: Վեհա-
փառ Հայրապետը, որը տկարության պատ-
ճառով չէր կարողացել ներկա լինել պատա-
րագին, խորը վշտի ծանրությամբ տակ, հաղ-
թահարելով թուլությունը, մասնակցեց հո-
գեհանգստին: Եկեղեցու սգո զանգերը հըն-
չում էին տխուր և հուսահատական: Վեհա-
փառը լուռ կանգնած աղոթում էր. խոր մըտ-
քերն ու խորհրդածություններն անհանգըս-
տացնում էին նրան և արցունք քամում նրա
աչքերից: Գարեգին Ա. Կաթողիկոսի կորուս-
տը ծանր էր նրա համար. չկար այլևս իր
սրտակից և օծակից եղբայրը:

Հոգեհանգստից առաջ, խաչն ու դավազա-
նը ձեռքին, գերաշնորհ Սահակ սրբազանը
բարձրանում է Իջման Սեղանի վրա և հուզ-
ված տոնով խոսում.

«Սուրբ Էջմիածինը, մեր Եկեղեցին և
հատկապես Վեհափառ Հայրապետը սուգի
մեջ մտան. մեզանից հեռացավ մեր հավերժ
սիրելին՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս,
մեծատաղանդ գիտնական, իր վաստակա-
վոր կյանքն ու գործունեությունը իր հարա-

զատ ժողովրդին նվիրաբերած Գարեգին Ա.
Կաթողիկոսը: Նրա մահը խորապես վշտաբե-
կեց հատկապես ծերունի Հայրապետին, որը
եղել է նրա մանկության ընկերը, սկսած
աշակերտական նստարանից մինչև Բեռլինի
աստվածաբանական համալսարանը և միշտ
նրա հետ բաժանել իր ուրախություններն ու
վշտերը:

Անցյալ տարի, երբ Հանդուցյալը ծանր
հիվանդացավ, վշտացած Հայրապետը իս-
կույն ևեթ իր ցավակցությունը հայտնեց
նրան և կարգադրեց Մայր Աթոռում մի ամ-
բողջ շաբաթ ժամերգություններից հետո
հսկում կատարել հիվանդի շուտափուլյթ
ապաքինման համար: Վեհափառը սակայն
գրանով չսահմանափակվեց. նա Անթիլիաս
ուղարկեց մի պատգամավորություն՝ հան-
ձինս գերաշնորհ տեր Վահան արքեպիսկո-
պոսի և պրոֆ.-դոկտ. Աշոտ Աբրահամյանի,
որոնք այցելեցին հիվանդին և մխիթարեցին
նրան: Շնորհազարդ Վեհափառի մահը շատ
մեծ կորուստ է առանձնապես մեր Եկեղեցու
համար:

Աղոթենք Ամենաբարձրյալին, որ սիրելի
Հանգուցյալի հոգին երկնային, լուսեղեն ար-
դարների շարքը դասի և նոր, արժանավոր
հաջորդ պարգևի, վերացնի Կիլիկիո Աթոռի
սգո քողը և մխիթարի մեր վշտացած Հայ-
րապետին ու ժողովրդին:

— Վեհափառ Տեր,— դառնալով դեպի
Վեհը վերջացնում է իր խոսքը գերաշնորհ
տեր Սահակ սրբազանը,— Սուրբ Հոգով
մխիթարվեք: «Հիշատակն արդարո՞յն օրհնու-
թեամբ եղիցի»:

Հոգեհանգիստ՝ ողբացյալ Գարեգին Ա. Կաթողիկոսի հիշատակին.— Հուլիսի 29-ին, կիրակի օրը, մատուցվեց սուրբ պատարագ և հատուկ հոգեհանգստյան կարգ Գարեգին Վեհի հիշատակի համար: Պատարագիչ Սահակ սրբազանը պատարագից հետո խոսեց Մեծի Տանն Կիլիկիոյ ողբացյալ Գարեգին Ա. Կաթողիկոսի կյանքի ու գործունեության, եկեղեցուն և իր ժողովրդին մատուցած մեծ և անմոռանալի ծառայությունների մասին: Սրբազանը կանգ առավ հատկապես Հանգուցյալի բազմաթիվ, սովոր աշխատությունների վրա, ցույց տալով նրանց արժեքը հայագիտության համար: Ամբողջ Եկեղեցին, հովիվն ու հավատացյալ հոտը ողբում էին սիրելի Վեհափառի անփոխարինելի կորուստը:

Քարոզից հետո վեհ ու տպավորիչ հանդիսությամբ կատարվեց հոգեհանգստյան կարգը:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գեորգ Զ. ի գահակալության յոթերորդ տարեդարձի տոնակատարությունը Մայր Աթոռում.— Հունիսի 24-ին Մայր Աթոռում նշվեց սիրելի Հայրապետի դահակալության յոթերորդ տարեդարձը:

Շատ տարիներ չեն անցել այն օրից, երբ հայ ժողովրդի եկեղեցական և աշխարհական ներկայացուցիչները Ազգային-Եկեղեցական մեծ ժողովում, էջմիածնում միաձայն Հովվապետ ընտրեցին Նորին Սուրբ Օծություն Գեորգ Զ. Կաթողիկոսին: Անցած այդ յոթ տարիները նշանավոր են այնպիսի մեծարժեք գործունեություններով, որոնք զարգացում են նրա Հովվապետության փառապանծ ուղին: Չափազանց բախտավոր է հայ հավատացյալ ժողովուրդը, որ այսօր Լուսավորչի գահի վրա տեսնում է այնպիսի մեկին, որն իր ամբողջ գիտակցական կյանքը և բազմաբեղուն գործունեությունը նվիրաբերել է իր Եկեղեցուն, ժողովրդին և հարազատ Հայրենիքին, և, չնայած իր խոր ծերությանը, տակավին շարունակում է մեղվաջան իր աշխատանքը հօգուտ հայ ժողովրդին և ի պայծառություն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու:

Մայր Տաճարում մատուցվեց պատարագ: Պատարագից հետո կատարվեց Հայրապետական մաղթանք. բոլոր միաբանները

խմբվում են Իջման Սեղանի առջև: Այնտեղ արժվեղորոշ գավաղան և ոսկեգույն խաչը ձեռքին իր հասակի ողջ շքեղությամբ և հայրապետական լրջությամբ կանգնած է քաջ Հովվապետը: Վերջին օրերս նրա տրամադրությունը տեղը չէ՝ նա անշափ վշտացած է լուսահոգի Գարեգին կաթողիկոսի մահվան համար: Հավատացյալ ժողովրդի հոսանքը դեպի եկեղեցին շարունակվում է դեռևս: Նրանք անվերջ գալիս են իրենց սերն ու որդիական մեծարանքը հայտնելու իրենց արթուն և իմաստուն Հայրապետին՝ նրա գահակալությունից փառավոր տոնի առթիվ: Որպես հավատացյալ ժողովրդի սրտերի ու իղձերի թարգման, Իջման Սեղանի վրայից հանդես է գալիս գերաշնորհ Սահակ սրբազանը և ասում սրտառույ մի քարոզ.

«Մեր սիրելի՛ և թանկագին՝ Հայրապետ, այսօր Հայ Եկեղեցին և հայ ժողովուրդը մեծ խանդավառությամբ և երախտագիտական զգացմունքով տոնում են Ձերդ Սուրբ Օծության դահակալության 7-րդ տարեդարձը:

Դուք Ձեր իննամյա տեղակալության և յոթնամյա կաթողիկոսության ընթացքում, Ձեր իմաստուն և հայրենանվեր գործունեությամբ, խոշորագույն ավանդ մտցրիք Հայ Եկեղեցու և ժողովրդի պաշտպանության գործում:

Համաշխարհային երկրորդ պատերազմի ժամանակ Ձեր նախաձեռնությամբ ստեղծված «Սասունցի Դավիթ» և «Բաղրամյան» տանկային շարասյուները նոր ապացույց տվեցին Ձեր ջերմ հայրենասիրության: Դուք, Ձեր հայրական խորհուրդներով և սրբատառ կոնդակներով մեծ զարկ տվեցիք հայրենադարձության, և այսօր մեր երկրում տպրող հայրենադարձ հայերը պարծանքով ու երախտագիտությամբ են հիշում Ձեր անունը:

Դուք վերաբացեցիք Սուրբ էջմիածնի Հոգևոր Դիմարանը, որտեղից դուրս եկած սաները պիտի զարդարեն Ձեր անունը և բարձրացնեն Հայ Եկեղեցու անունն ու դիրքը: Հապա Ձեր ճառերն ու կոնդակները խաղաղության կոնֆերանսներին ու մեր տարագիր եղբայրներին...

Սիրելի՛ ժողովուրդ, հեռու չգնանք, հենց վերջերս՝ մայիս ամսում, Վեհափառ Հայրապետը, որպես Խաղաղության Համամիութենական Կոմիտեի անդամ, իր հոյակապ ճառով ընդհանուր ուշադրությունը գրավեց: Մենք, Վեհափառ Հայրապետի շքախմբի ան-

դամներս, այդ ճառից հետո, որը բոլորին հիացմունք պատճառեց, ոչ թե դահլիճի աթոռների վրա էինք նստած, այլ եթերումն էինք մեզ դգում:

Վեհափառ Տեր, Դուք Ձեր կյանքի 70 տարին նվիրել եք Մայր Եկեղեցուն և Հայրենիքին, և այդ 70 տարին մերն է՝ հայ ժողովրդին և Եկեղեցուն: Դուք այն հոգևորականներին չեք եղել, որ ձգտել են պաշտոնների, այլ պաշտոններն են Ձեր ետևից վազել, տեսնելով Ձեր հարազատ, աշխուրջ, արդար աշխատանքն ու գործերը:

Երբ մարդ մի բարձր սար է բարձրանում, նա երբեմն հոտ է նայում տեսնելու թե որքան ճանապարհ է անցել և առաջը նայում, թե որքան է մնացել: Դուք այդ ճանապարհը անցել եք և այժմ բարձր սարի գագաթին եք կանգնած: Բարձր սարից մարդու աչքին նոր հորիզոններ են երևում, և Ձեր սրատես աչքերով Դուք էլ տեսնում եք նոր հորիզոններ: Այդ հորիզոնները Ձեր այն իղձերն են, որ տակավին ունեք:

Սխալված չեմ լինի, եթե ասեմ, որ իղձերից մին է այս Սուրբ Տաճարի վերանորոգությունը, նաև օտար երկնքի տակ ու օտար հողի վրա ապրած Ձեր տարագիր որդիների հայրենադարձը, Ձեր սարկավազների վարդապետական ձեռնադրությունը և խաղաղությունը՝ բոլոր ազգերի ու ժողովուրդների մեջ:

Վեհափառ Տեր, Մայր Աթոռի միաբանները, ներկա ժողովուրդը, շրջապատելով Ձեզ, մեր աղոթքներով մաղթում ենք Ձեզ երկար կյանք և առողջություն: Ընդունեցե՛ք մեր շնորհակալությունները և լավագույն ցանկությունները Ձեր օծման 7-րդ տարեդարձի առթիվ:

Թո՛ղ Տերը զորավիգ լինի Ձեզ, երկարացնի Ձեր երկրավոր կյանքը թե՛ հօգուտ Եկեղեցու և թե՛ հօգուտ Հայրենիքի բարգավաճման:

Թո՛ղ Տերը արժանացնի մեզ տակավին երկար տարիներ տեսնելու Ձեզ բազմած Հայրապետական Աթոռին և Ձեր իմաստուն ղեկավարությամբ պահեք, պահպանեք մեզ:

Լավ կլինեք, եթե ամբողջ ժողովրդով երգեինք հին օրհներգներից մեկը՝ հորինված հայրապետների համար, սակայն ես թարգմանը հանդիսանալով բոլորի իղձերին, կասեմ՝

«Ամեն հայի սրտից բխած՝
Լսի՛ր մեր ձայնն, ո՛վ Աստված.
Երկար կյանք տուր Հայրապետին,
Երկար օրեր մեր Սուրբ Հոր:
Տե՛ր, անսասան պահիր Դու դու միշտ
Քո իսկ հիմնած Մայր Աթոռս:

Այս գեղեցիկ վերջաբանով սրբազանը սովարտում է իր քարոզը: Հուզմունք կա բոլորի սրտերում: Առավել ևս հուզվել է ժերուների Հայրապետը: Նա լուռ կանգնած է և սեևաբիր նայում դեպի առաջ, կարծես դեպի անսահման հեռուն: Արտասուքի կաթիլները գլորվում են նրա աչքերից: Եվ ո՛վ գիտի, թե ինչեր են անցնում այժմ նրա մտքով և ի՞նչ մտածումներ են նրան այդպես հուզում... Բայց նրա դեմքի ընդհանուր արտահայտությունից մի բան պարզ երևում է, որ նա չի հաճում լսել իր մասին դրվատականներ, քիչ է համարում իր մեծարժան ծառայությունները և լցված է իր Եկեղեցուն և Հայրենիքին նորանոր ծառայությունների մատուցելու անսահման վճռականությամբ:

Քարոզից հետո կատարվեց Հայրապետական մաղթանք, որից հետո Վեհափառը հուզված և բեկբեկուն ձայնով ասում է շնորհակալական հակիրճ խոսք, խնդրում Տիրոջից հաստատություն և բարեգարություն Մայր Աթոռին, Հայրենիքին, ժողովրդին, օրհնում և արձակում: Բոլոր ներկա եղողները որդիական ակնածանքով համբուրում են նրա Սուրբ Աջը: Ապա Վեհափառը հանդիսությամբ բարձրանում է Վեհարան, շրջապատված բոլոր միաբաններով, Հոգևոր Դեմարանի դասախոսական կազմով, ամբողջ ուսանողությամբ: Մեծ դահլիճում Վեհափառը Հոգևոր Ծեմարանի ղեկավար Մ. Մինասյանի, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Կամսարականի և այլոց հետ ժպտած ժծաղ ընդունում է հյուրերին:

— Ես չափազանց ուրախ եմ, — դիմում է Վեհափառը հյուրերին, — որ դուք եկել եք այստեղ՝ շնորհավորելու ինձ՝ իմ գահակալության առթիվ: Այդ վկայում է իմ նկատմամբ Ձեր անկեղծ սիրտ և ջերմ զգացմունքների մասին: Մեր ներկա միաբանությունը թվով քիչ է, բայց նա պետք է ուրախ լինի ճեմարանավարտ այն նոր սարկավազներով, որոնք շրջապատել են իրեն, և որոնցից ես ուզում եմ պատրաստել անձնվեր և շնորհալի մշակներ մեր Եկեղեցու համար:

Ապա նա խրատական խոսք է կարդում և օրհնում հյուրերին ու հրավիրում է սեղանատուն: Շքեղ կահավորված կից դահլիճում, հինավուրց կամարների տակ թնդում է «Էջ Միածինն ի Հօրէ» սրբազան շարականը, Մայր Աթոռի հիմնը:

Անգնահատելի են վեհափառ Հայրապետի մեծավաստակ ծառայությունները մեր Եկեղեցու և ժողովրդի համար: Առավել մեծ է նրա դերն ու նշանակությունը արդի պայմաններում, երբ վերին աստիճանի սրված են միջազգային փոխհարաբերությունները. երբ աշխարհի բազմամիլիոն ժողովուրդներին սպառնում է նոր համաշխարհային կոր-

ծանարար պատերազմի արհավիրքը, նա հանդես է գալիս մշտատև և ընդհանուր խաղաղության համար ապրող ու մաքառող դրոշակակիրներից մեկը՝ հետևելով իր Վարդապետի իսկական ուսմունքին՝ «Երանի՛ խաղաղարարաց, դի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին»: Հայ Եկեղեցին երբեք չպիտի մոռանա իր Հովվապետի մեծագույն երախտիքները, այլ ոսկե տառերով պիտի գրի նրա մասին իր պատմության էջերում:

Տե՛ր, անսասան պահիր Մայր Աթոռը, արևշատություն պարգևիր մեր սիրելի Հայրապետին, որպեսզի մեր Եկեղեցու նավը հմտորեն վարվելով, անխափան հասնի հավիտենական, երջանիկ նավահանգիստը:

